

## Ընդդիմախոսական կարծիք

Օվսաննա Մենիկի Խաչատրյանի՝ «Միջնադարյան գրական ժանրերը Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում» ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայ միջնադարյան գրականության մեջ լայն կիրառություն գտած մի շարք գրական տեսակներ վերջին տասնամյակներում եղել են հետազոտողների ուշադրության շրջանակում, կատարվել են տեսական ընդհանրացումներ: Գեղարվեստական առանձնահատկությունների տեսակետից հանգամանալից քննության են ենթարկվել պատմագրության, վկայաբանության, վարքի, ողբի, ներբողի, հիմներգության, տաղերգության, առակի, գրույցի, գանձի, կաֆայի, հիշատակարանի ժանրերը, ծավալուն գանազան քերթվածներ՝ միջնադարյան պոեմ բնորոշմամբ:

Աշխատանքը, որին ձեռնամուխ է եղել Օվսաննա Խաչատրյանը, նվիրված է Մաշտոցի անվան Մատենադարանի՝ ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում միջնադարյան գրական ժանրերի դրսևորումներին: Բազմաթիվ ուսումնասիրությունների առկայության պարագայում նյութը, անշուշտ, ենթադրում է կրկնությունների վտանգ, ինչը երբեմն տեսանելի է աշխատանքում, և ինչից հնարավոր չէր խուսափել ժանրերի սահմանումները տալիս: Գնահատելի է, սակայն, որ ատենախոսն արժևորում է առկա հետազոտությունները: Թեմայի մշակվածության քաջատեղյակությունից էլ բխում են ատենախոսի կողմից առաջադրված խնդիրների քննության անհրաժեշտության խորքային հիմնավորումները: Ընտրված մեթոդների ու համակարգված մտածողության շնորհիվ Օվսաննա Խաչատրյանը կարողացել է Մաշտոցի անվան Մատենադարանի՝ ԺԲ-ԺԵ դարերի 400-ից ավելի ձեռագրերի օրինակով վեր հանել օրինաչափությունները, պատկերացում տալ ժանրերի միջնադարյան ըմբռնումների, զարգացման ընթացքի մասին, տալ համապատասխան մեկնաբանություններ, երբեմն նաև՝ քննվող ժանրերի առանձնահատկությունների առավել ամբողջական սահմանումներ:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվում են հանելուկի ժանրը Հայամավորք ժողովածուներում, կաֆայի ժանրը Գանձարան ժողովածուներում, ձեռագրի հիշատակարանը, գրառաջքը: Տրվում են պատմագրության, վարք-վկայաբանության, թղթի ընդհանուր բնութագրերը, շարականների, տաղերի, գանձերի, ներբողների և Գրիգոր Նարեկացու Մատյանի ընդգրկվածությունը ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում:

Հանելուկի և կաֆայի ձեռագրական ինքնատիպ դրսևորումները ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում քննվում են ատենախոսության առաջին գլխում: Հանելուկը ներառվել է Հայամավորք ժողովածուներում, կաֆան՝ Գանձարան ժողովածուներում:

Դեռևս Աս. Մնացականյանն է նկատել, որ եկեղեցական սրբերի վարքերին, վկայաբանություններին նվիրված Հայամավորք ժողովածուների լուսանցքներում զետեղված են հանելուկներ, և դրանք այս կամ այն սրբին նվիրված գովքեր են (Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ (V-XVIII դարեր), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 107): Ատենախոսի նպատակն է բացատրել զուգադրումների պատճառները, առկայության դեպքում՝ փոխներթափանցման, փոխազդեցության աստիճանը: Օվսաննա Խաչատրյանը հանգում է հետևության, որ երկու ժանրն էլ՝ հանելուկը վարքի հետ զուգադրմամբ, կաֆան՝ գանձի, ժողովածուներում պահպանել են իրենց ժանրային առանձնահատկությունները և միտում են ունեցել գեղարվեստականություն հաղորդելու բուն տեքստին, նաև մատչելի դարձնելու այն:

Թեև հանելուկների պարագայում եզրակացություններն արվում են երկու ձեռագրերի օրինակով, սակայն պարզաբանումները տրամաբանական են, բերած կովանները՝ փաստական հիմքի վրա, ուստի և ընդունելի, մանավանդ որ արձակ և չափածո այդ ժանրերի համատեղումը մի ժողովածուում իրապես վեր է հանում միջնադարյան ձեռագրական մշակույթի յուրօրինակ պատկերը:

Համամիտ չենք միայն, որ ատենախոսը գեղարվեստականության առումով խիստ տարրորոշում է դնում վարքի և հանելուկի միջև՝ վարքը համարելով պատմագրությունից առանձնացած պատմական ստեղծագործություն (էջ 21):

Պատմագրական ժանրի մաս կազմելով՝ արդ երկերը գրական երևույթներ են, գեղարվեստական պատումներ (Աբեղյան Մ., Երկեր, Գ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ

377), պատմական հուշարձան լինելով՝ նաև գրական ստեղծագործություններ են՝ միջնադարյան գեղարվեստական արձակի դրսևորումներ, քանի որ նրանց մեջ պատմական կորիզը ներկայացվում և բացահայտվում է կյանքի ընկալման և արտացոլման գեղարվեստական չափանիշներով (Ավդալբեկյան Մ., Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (Մոսկով), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 56): Գեղարվեստական կատարյալ ձևի մեջ արտացոլվում են իրական պատմական իրադարձություններ (Տեր-Դավթյան Քն., XI-XV դարերի հայ վարքագրությունը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 35), ժանրի գեղարվեստական արժեքը ձևավորվում է կերպարակերտման սկզբունքներով, կիրառած գեղարվեստական արտահայտչամիջոցներով ու հնարանքներով, ինչպիսին են, օրինակ, հրաշքներն ու տեսիլները (Տեր-Դավթյան Քն., XI-XV դարերի հայ վարքագրությունը, էջ 17-29):

Հակված ենք ընդունելու, որ, այո՛, հանելուկը ավելի դյուրին է դարձրել վարքի ընկալումը: Ընտրված հանելուկն ընդգծել է կերպարի առավելապես այս կամ այն հատկանիշը՝ ընթերցողի հիշողության մեջ ամրագրելու նպատակով:

Գանձարանային կաֆաների քննությունը կատարելիս ատենախոսը փաստական հենքի վրա (էջ 25) լուծում է այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է կաֆաների հեղինակի հարցը: Նա սահմանում է գանձարանային կաֆաների ժանրային հատկանիշները, և դա կարևորվում է մասնավորապես գիտնականների՝ թեև իրար չհակադրվող, սակայն տարբեր շեշտադրումներով կարծիքների պարագայում: Հարցը լուսաբանվում է դասական կաֆայի ժանրային հատկանիշները գանձարանային կաֆաների հատկանիշների հետ համադրությամբ՝ կիրառության ոլորտ, կառուցվածքային հատկանիշներ, տաղաչափություն, հանգավորում: Ընտրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս վեր հանելու առանձնահատկությունների համընկնումն ու նաև ոչ էական շեղումները, այն է՝ գանձարանային կաֆայի՝ հիշատակարանային բնույթ և ծայրակապ ունենալը, գանձից առաջ դրվելը:

Ընդգծենք, որ ատենախոսը մասնագիտորեն է գնահատում կաֆաների ձեռագրագիտական նշանակությունը՝ իբրև հիշատակարանների բացակայության դեպքում ձեռագրի գրչության ժամանակի հավաստում, տեսնում և արձանագրում է

նան օրինաչափությունները, ինչպես նույն կաֆայի՝ տարբեր գանձերի նվիրված լինելը և հակառակը, կարողանում է դիպուկ բնորոշում-անվանում տալ քննվող ժանրին:

Գնահատելի է նաև, որ ատենախոսը վեր է հանում տարբեր հեղինակների գանձարանային կաֆաների յուրահատկությունները, լուծում գանձերի հեղինակների վերաբերյալ ենթադրությունները՝ հիմք ընդունելով գանձերից առաջ դրված ցուցում-կաֆաներում եղած տեղեկատվությունը:

Երկրորդ գլխում քննվում է ձեռագրի հիշատակարանը, որը արժևորվում է որպես բազմազան տեղեկություններ պարունակող հավաստի աղբյուր: Ատենախոսի վերլուծության սկզբունքները նույնն են. հանգամանորեն անդրադառնում է հիշատակարանների թեմատիկ, կառուցվածքային, ոճային առանձնահատկություններին, երբեմն ծածկագրությամբ, երբեմն ծայրակապով գրված լինելուն: Անդրադառնում է նաև կիրառության ոլորտի առանձնահատկություններին, արձակ և չափածո բնույթին, հիշատակարանների որոշակի ինքնուրույնացմանը, մասնավորապես չափածո հիշատակարանների՝ առանձին հիշատակարան-բանաստեղծություն դառնալուն:

Փոքր-ինչ չափազանցված է, կարծում ենք, այն տեսակետը, որ Ներսես Շնորհալու հիշատակարաններն իրենց գեղարվեստականությամբ չեն զիջում իր տաղերին: <<Անգնահատելի գրական-գեղարվեստական արժեք ունեն Ներսես Շնորհալու հիշատակարանները>>,- գրում է ատենախոսը (էջ 60): Բերված օրինակը, անշուշտ, գեղարվեստական արժեք ունի, բայց ոչ համարժեք՝ բոլոր տաղերի հետ զուգահեռ տանելու և ընդհանրացված կարծիք ներկայացնելու:

Գնահատելի է, որ ատենախոսը համեմատական եզրեր է գտնում քննվող ժանրերի միջև: Նա ընդգծում է հիշատակարանի՝ ոչ ինքնուրույն կիսանկախ ժանրի և գրառաջքի՝ կախյալ ժանրի (ատենախոսի բնորոշումներն են) միջև եղած նմանություններն ու տարբերությունները: Տարբերակում է հիշատակարանային կաղապարներ և կաղապարային հիշատակարաններ հասկացությունները: Վերջինս ուսումնասիրության առարկա չի եղել, մինչդեռ կարևորվում է, քանի որ, ատենախոսի տեղին դիտարկմամբ, նախ և առաջ պարունակում է ձեռագրագիտական շատ հարցերի պատասխաններ միջնադարյան գրիչների կողմից նմուշ-օրինակների

ստեղծագործաբար օգտագործված լինելու շնորհիվ:

Ատենախոսի կողմից կատարված ձեռագրագիտական փոքրիկ հետազոտությունը՝ պարզելու ՄՄ հմր 8578 ձեռագրի գրիչ Սարգիսի ով լինելը և գրչության վայրը (էջ 69-70), ատենախոսի մասնագիտական հմտությունների դրսևորման ակնառու օրինակներից է:

Հետազոտական առումով հետաքրքիր էին բերված արձանագրություն-հիշատակարանների նմուշ-օրինակները:

Ատենախոսության երրորդ գլխում տրվում է գրառաջքի ընդհանուր բնութագիրը: Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ տարբեր գրությունների սկզբում դրվելու համար գրված այդ նախաբաններին առաջին անգամ անդրադարձել է գրականագետ Ա. Դոլուխանյանը՝ այն համարելով գրական յուրահատուկ ձև կամ ենթաժանր (էջ 87):

Ատենախոսն իր առջև խնդիր է դրել վեր հանել արձակ և չափածո դրսևորումներով հանդես եկող գրառաջքի բովանդակային, գեղարվեստական, ոճական, ձևային, կիրառության ոլորտի առանձնահատկությունները, գրառաջք-հիշատակարան միջժանրային առնչությունները: Տասներկու ձեռագիր մատյանների ուսումնասիրությունից հետո վեր հանված առանձնահատկությունների դիտարկումը նրան թույլ է տալիս եզրակացնելու, որ գրառաջքը հայ միջնադարյան գրական ժանր է: Ատենախոսը կարողանում է հարցադրումներին տալ համեմատաբար լիարժեք պատասխաններ, քանի որ հայ միջնադարյան գրականության ժանրերի քննությունը կատարում է փոխադարձ առնչությունների մեջ՝ երբեմն եզակի, երբեմն բազմազան հատկանիշներով, գլխավոր՝ առաջնային հատկանիշներից բացի հաշվի է առնում նաև երկրորդական հատկանիշները:

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացվում է ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում մի շարք ժանրերի ընդգրկվածության պատկերը: Համակողմանի ուսումնասիրությունների առկայության պարագայում տրված ընդհանուր բնութագրերն ըստ էության նոր բնորոշումներ չեն: Կարևորվում է ատենախոսի կողմից կատարված ձեռագրագիտական աշխատանքը: Հավելենք նաև, որ ատենախոսը համապատասխան հղումներով հենվել է մասնագիտական առկա կարծիքների վրա: Ինչ վերաբերում է Գրիգոր Նարեկացու Մատյանը

բազմաթիվ գրականագետների կողմից պոեմ ընկալվելուն՝ նշենք, որ դա ժամանակի իրողություն էր, խորհրդային շրջանի գրականագետների կողմից գուտ պայմանականորեն կիրառված եզրույթ, որ բացատրվում էր քննվող ստեղծագործության ծավալով (Մադոյան Ա., Հայկական միջնադարյան պոեմը, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1985, էջ 3-6):

Ցանկալի է, որ ատենախոսն առաջնորդվի գրչագրերում հեղինակների, թեկուզ և գրիչների հավելված բնորոշումներով, քանի որ նրանց կողմից վերնագրում նշված անունը և բնութագիրը հիմնականում համապատասխանում է գրվածքի տեսակին և տալիս է լրացուցիչ կարևոր տեղեկություններ: Օրինակ՝ Դատվանում գրված (1576թ.) Գանձարանի հիշատակարանում գտնում ենք գանձի հետաքրքիր բնորոշում (ՄՄ ձեռ. հմր 5434, թերթ 283 ա)՝ տրված Հակոբ գրիչի կողմից. «<զեղանակաւոր ճառս տէրունական տաւնից>»: Բառակապակցությունը մի քանի կողմերով է բնութագրում գանձը, ինչպես՝ երգելով ասվելը, ծավալուն պատմողական լինելը չափածո ձևի մեջ, տերունական տոների համար նախատեսված լինելը, ինչպես ճառընտիրները:

«Միջնադարյան գրական ժանրերը Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում» թեմայով ատենախոսությունը ձևավորված է մշակված միասնական կարգով: Եզրակացությունները բխում են առաջադրված նպատակներից և խնդիրներից, տպագրված հոդվածներն արտացոլում են ատենախոսության տարբեր գլուխներում արտացոլված դրույթները: Ատենախոսը, բացի անտիպ սկզբնաղբյուրներից, օգտագործել է հրատարակված հարուստ գրականություն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, նաև օգտվել է կայքէջերից: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Մաշտոցի անվան Մատենադարանի 400-ից ավելի ձեռագիր աղբյուրների հենքի վրա ատենախոսը ներկայացրել է գրական տարբեր ժանրերի կենցաղավարման երևույթները ժողովածուներում, մեկնաբանել յուրաքանչյուրի գործառույթները, անդրադարձել հայ հին և միջնադարյան գրավոր մշակույթի կարևոր բաժիններին՝ համակողմանի քննության ենթարկելով դրանց ժանրային բնութագիրը: Կարևորվում է այն հանգամանքը, որ ատենախոսը ժանրային բնութագիրը սահմանելիս չի անտեսել քննվող տեսակների ոչ գրական կողմերը: Միջնադարյան ժանրերի կիրառական ոլորտը դիտարկվում է լայն շրջանակում, և

ցույց է տրվում միջնադարյան գրականության գործընթացի փոփոխական և զարգացող բնույթ ունենալը:

Ցանկալի է, որ Օվսաննա Խաչատրյանը հրատարակի ատենախոսությունը՝ ուղղելով, իհարկե, նկատվող տեխնիկական վրիպակները՝ էջ 10,19,21,76,114, 125, 126, ծանոթագրության կրկնումը՝ թիվ 12 և թիվ 32, ընդունելու դեպքում՝ հաշվի առնելով նաև մեր նկատառումները: Մասնագետներին նոր ուսումնասիրությունների հնարավորություն կտա նորահայտ բնագրերի հրատարակումը:

Այսպիսով՝ ներկայացված ատենախոսությունը՝ «Միջնադարյան գրական ժանրերը Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում», որը համապատասխանում է Ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» թվանիշին, կատարված է գիտական աստիճանավորման կանոնակարգի պահանջներին համապատասխան, ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդին՝ Օվսաննա Մենիկի Խաչատրյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Հերիքնագ Ռրսկանյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

10.02.2025

